ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091435136
էլ·հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.09.2017թ.
320-ի 2

Սյունիքի մարզպետ
պարոն Վահե Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հակոբյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին է դիմել «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: Նա ներքոշարադրյալ հարցմամբ դիմել է Ձեզ, սակայն պատասխան չի ստացել:
«Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ հայտնել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ վտանգ է սպառնում Ձեզ, որ, ի տարբերություն բազմաթիվ նախարարների եւ Սյունիքի բազմաթիվ նախկին մարզպետների, անհրաժեշտություն է առաջացել շրջել թիկնազորով:
2. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության նախագահի կարգադրությամբ Ձեզ տրամադրվել է հատուկ պետական պահպանություն, եթե այո, ապա ի՞նչ ժամկետով եւ ո՞ր հանգամանքների հետ կապված: Խնդրում ենք տրամադրել նաեւ համապատասխան իրավական ակտի պատճենը:
3. Եթե Ձեզ չի տրամադրվել հատուկ պետական պահպանություն, ապա խնդրում ենք պարզաբանել՝ ի՞նչ գումարներից են վճարվում Ձեր թիկնազորի ծախսերը, ներառյալ ավտոմեքենայի, վառելիքի եւ անձնակազմի աշխատավարձի ծախսերը:
4. Խնդրում ենք պարզաբանելէ արդյո՞ք թիկնազորը շարունակում է Ձեզ ուղեկցել նաեւ այն ժամանակ, երբ այցելում եք Երեւան, թե՞ թիկնազորն անհրաժեշտ է միայն Սյունիքի մարզում:
5. Խնդրում եմ տրամադրել Ձեր ծառայողական ավտոմեքենայի եւ թիկնազորի ավտոմեքենայի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները, որտեղ կերեւա, թե ո՞վ է հանդիսանում դրանց սեփականատերը, թիկնապահների աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի պատճենները, որտեղ կերեւան համապատասխան պատվիրատուն (վճարող կողմը), ինչպես նաեւ վճարի չափը:

Նաեւ հաշվի առնելով պետական բյուջեն խնայողաբար եւ նպատակային ծախսելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նախա·ահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի եւ մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու ՀՀ

համապատասխան օրենսդրության պահանջը, կարեւորելով պետական ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման նկատմամբ հանրային վերահսկողության

անհրաժեշտությունը եւ նշված հարցում հանրային հետաքրքրությունը, խնդրում եմ տրամադրել նաեւ հետեւյալ տեղեկությունները.

6. Ո՞րքան է կազմում Ձեր կողմից ուղղաթիռով Կապան եւ ԼՂՀ ճամփորդելու, ուղղաթիռն ամբողջ օրով Կապանում ենթադրաբար պահելու եւ վերադարձի գինը,
7. Ո՞վ եւ ի՞նչ աղբյուրներից է վճարում նշված ուղեւորություններ գումարը,
8. Ինչո՞վ է պայմանավորված հենց ուղղաթիռով ճամփորդելու անհրաժեշտությունը (մանավանդ որ ուղղաթիռով ժամանելուն զուգահեռ Ձեր ավտոմեքենաները վարորդների հետ նույնպես ժամանում են Կապան՝ օդանավակայանում Ձեզ դիմավորելու նպատակով),
9. Խնդրում ենք տրամադրել ուղղաթիռային փոխադրման պայմանագրի պատճեն եւ վճարումը հավաստող փաստաթղթերը,
10. Ու՞մ միջոցների հաշվին եւ որտե՞ղ եք բնակվում Սյունիքի մարզում, ո՞վ եւ որքա՞ն է վճարում Ձեր բնակարանի կամ տան համար,
11. Բացի Ձեզնից՝ ովքե՞ր են նաեւ բնակվում նույն հասցեում:
12. Խնդրում ենք տրամադրել համապատասխան պայմանագրերը (եւ քանի որ Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի վարձակալության, օգտագործման կամ առուվաճառքի պայմանագրերը կնքված են համարվում նշված իրավունքների պետական գրանցման պահից՝ խնդրում ենք նաեւ տրամադրել պետական գրանցման վկայականի պատճենը կամ քաղվածք գրանցամատյանից այդ մասին)»:

Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

Լիանա Դոյդոյան
ԻԱԿ նախագահ